



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մարտի 2011թ. թիվ 81-Ա

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ “ՎԱՐՁԱՏՐՎՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ” ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի թիվ 1854-Ն որոշմամբ հաստատված “Վարձատրվող հասարակական աշխատանքների” կազմակերպման ոլորտների և անցկացման պայմանների” 13-րդ կետի պահանջների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի մարտի 17-ի թիվ 59-Ա որոշմամբ հաստատված ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության և դրանց ներկայացման ժամանակացույցը, հաշվի առնելով Զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 15.03.2011թ. նիստով տրված երաշխավորությունները (արձանագրությունը կցվում է) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի համապատասխան գրությամբ տրված համաձայնությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Հաստատել “Վարձատրվող հասարակական աշխատանքներ” ծրագրի շրջանակներում իրականացվելիք հետևյալ ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ն. Դաշճյան

Ա.ՔՈԶԱՐՅԱՆ

2011թ. մարտի 25  
ք.Վանաձոր